



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ N 0584/02/2010թ.
Նախագահող դատավոր՝ Հ. Խաչատրյան
Դատավորներ՝ Գ.Արզումանյան
Ն. Գրիգորյան

Քաղաքացիական գործ N 0584/02/2010թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր
Դատավորներ՝

Ի.Կարապետյանի
Զ. Օհանյանի
Ա.Հայրապետյանի

2011թ. ապրիլի 19-ին

ք.Ստեփանակերտ

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Թամարա Թևոսի Աթայանի ընդդեմ Նուշիկ Լևոնի Արզումանյանի, ԼՂՀ Մարտունու նոտարական տարածքի պետնոտարի՝ բնակելի տան նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2011թ. փետրվարի 14-ի որոշման դեմ հայցվոր Թամարա Աթայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան, հայցվոր Թամարա Աթայանը պահանջել է անվավեր ճանաչել իր և Նուշիկ Արզումանյանի միջև կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և կիրառել գործարքի անվավերության հետևանքները:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) 2010թ. հունիսի 29-ի վճռով հայցը բավարարվել է ու անվավեր ճանաչվել հայցվոր Աթայանի և պատասխանող Արզումանյանի միջև Մարտունի քաղաքի Մ.Մելքոնյան փողոցի թ.14 հասցեում գտնվող 74.69 քմ մակերեսով բնակելի տան և 0.02 հա մակերեսով

տնամերձ հողամասի նկատմամբ կնքված նվիրատվության պայմանագիրը՝ կիրառելով դրա անվավերության հետևանքները:

Վերաքննիչ դատարանը 2010թ. օգոստոսի 18-ի որոշմամբ բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի վճիռն ու մերժել հայցը:

Գերագույն դատարանի 2010թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ բեկանվել է Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկվել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի 2010թ. դեկտեմբերի 13-ի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի 2011թ. փետրվարի 14-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2010թ. դեկտեմբերի 13-ի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ հայցվոր Աթայանը բերել է վճռաբեկ բողոք:

Պատասխանողի ներկայացուցիչը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ և 600-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ինքը հիվանդ ու զառամյալ կին է, չի իմացել օրենքի պահանջները, հավատացել է թոռան՝ Նուշիկ Արզումանյանի խոստմանը, որ իրեն կխնամի և ընդառաջելով թոռան խնդրանքին, մոլորության ազդեցության տակ տունը նվիրել է նրան: Օրենքի չիմացության պատճառով չի հասկացել, որ թոռան հետ ունեցած՝ իրեն խնամելու մասին պայմանավորվածությունը պետք է նշվեր պայմանագրում, իսկ նոտարն իրեն չի բացատրել օրենքը: Բողոք բերած անձը գտնում է, որ գործարքը կնքել է էական մոլորության ազդեցության տակ:

Առողջական և նյութական վիճակի վատթարացումից դրդված, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ինքը հրաժարվել է նվիրառուին վիճելի տունն ու տնամերձ հողամասը փոխանցելու պայմանագիրը կատարելուց: Բողոք բերած անձը գտնում է, որ նոր պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի իր կենսամակարդակի էական իջեցում:

Ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հետևանք, խախտվել է իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքը վիճելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ: Բողոքում բարձրացված հարցը էական նշանակություն ունի օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը խնդրում է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2011թ. փետրվարի 14-ի որոշումը ու հայցը բավարարել, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոքի պատասխանում նշված է, որ վճռաբեկ բողոքի պատճառաբանություններն անհիմն են ու չեն համապատասխանում գործում առկա ապացույցներին:

Հայցվորը նվիրատվության պայմանագիրը կնքել է իր կամքով ու ցանկությամբ: Նոտարը հայցվորին բացատրել է նվիրատվության պայմանագրի կնքման կարգն ու հետևանքները, ինչի մասին նա պնդել է բոլոր դատական նիստերում, հայտնելով, որ նոտարի նկատմամբ որևէ պահանջ չունի:

Հայցվորը գիտակցել է կտակի և նվիրատվության տարբերությունները, քանի որ նույն ժամանակաընթացքում իր մեկ այլ սեփական տունը կտակել է մյուս թոռանը՝ Մասունին և գիտեր նվիրատվության գործարքի հետևանքների մասին: Պատասխանի հեղինակը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ և 600-րդ հոդվածները սույն գործով կիրառելի չեն:

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Թամարա Աթայանը և Նուշիկ Արզումանյանը 2009թ. մարտի 20-ին կնքել են նվիրատվության պայմանագիր, համաձայն որի, Թամարա Աթայանն իրեն պատկանող անշարժ գույքը՝ ԼՂՀ Մարտունի քաղաքի Մ.Մելքոնյան փողոցի թ.14 հասցեում գտնվող երկհարկանի առանձնատունը՝ տնամերձ հողամասով նվիրել է Նուշիկ Արզումանյանին:

2. Նվիրատվության պայմանագիրը ստացել է պետական գրանցում և 2009թ. ապրիլի 8-ին Ն.Արզումանյանին տրվել բնակելի տան սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Մարտունի քաղաքի Մ.Մելքոնյան փողոցի թ. 14 տան և տնամերձ հողամասի վճարումները փաստորեն կատարել է Թամարա Աթայանը:

4. Հայցվորը 2010թ. մայիսի 13-ին դիմել է Առաջին աստիճանի դատարան, նշելով որ իր և պատասխանողի հարաբերությունները վատացել են, ինչը և հանդիսացել է նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայց ներկայացնելու հիմնական պատճառը:

Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանություններով.

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները: Գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն չունի: Ընդ որում, մոլորության էական կամ ոչ էական բնույթը պարզում է դատարանը, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից և այն իրողությունից, թե որքանով է մոլորությունն էական գործարքի տվյալ մասնակցի համար:

Գործի պարզված տվյալներով, հայցվորն անձամբ ինքն է ներկայացել Մարտունու տարածքային պետական նոտարին ու ցանկություն հայտնել Մարտունի քաղաքի Մ.Մելքոնյան փողոցի, թ. 14 բնակելի տունը նվիրելու իր թոռ Նուշիկ Արզումանյանին: Հայցվորը չի ժխտել նաև, որ նվիրատվությունը կատարվել է օրենքի սահմաններում, ինքը գիտակցել է, որ բնակելի տունը նվիրում է իր թոռանը, իսկ հետագայում պատասխանողն իրեն անուշադրության է մատնել, ինքը մոլորվել է ու փռշտանել, որ տունը նվիրել է Նուշիկ Արզումանյանին:

Հայցվորը և պատասխանողը 2009թ. մարտի 20-ին գրավոր կնքել են նվիրատվության պայմանագիր, որով հայցվոր Թամարա Աթայանն իր թոռ Նուշիկ Արզումանյանին է նվիրել սեփականության իրավունքով իրեն պատկանող Մարտունի քաղաքի Մ.Մելքոնյան փողոցի՝ 74.69 քառ. մետր տարածքով թ. 14 բնակելի տունը՝ 0,02 հա մակերեսով տնամերձ

հողամասով: Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 596-րդ հոդվածի համաձայն, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումն ենթակա է պետական գրանցման: Ըստ գործում առկա փաստերի, պատասխանողը 2009թ. ապրիլի 8-ին իր իրավունքները գրանցել է ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի Մարտունու տարածքային ստորաբաժանումում:

Թ.Աթայանը բնակելի տան նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջ է ներկայացրել Առաջին ատյանի դատարան 2010թ. մայիսի 13-ին:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն պատճառաբանությանը, որ օրենքի չիմացության պատճառով թոռան հետ ունեցած՝ իրեն խնամելու պայմանավորվածության մասին չի նշել նվիրատվության պայմանագրում, ապա Գերագույն դատարանը գտնում է, որ այն անհիմն է և չի բխում գործի նյութերից, քանի որ հայցվոր կողմը որևէ ապացույց չի ներկայացրել նվիրատվության պայմանագիրը որևէ նախապայմանով կնքելու վերաբերյալ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ հայցվորը ունի բարձրագույն կրթություն, պատասխանող Ն.Արզումանյանը նոր է ընտանիք կազմել, վիճելի տան նվիրատվության պայմանագրի կնքման պահին չունեք որևէ սեփականություն, այդ այն դեպքում, երբ հայցվորը տնօրինում էր երեք սեփական բնակելի տների, որից մեկը օգտագործվում է այլ անձանց կողմից: Գործի փաստերի համաձայն, նույն ժամանակաշրջանում հայցվոր Թ.Աթայանը կատարել է նաև անշարժ գույքի հետ կապված այլ գործարք, ինչը ևս վկայում է այն մասին, որ նա ստույգ տարբերում էր գործարքների էությունն ու Մարտունի քաղաքի Մ.Մելքոնյան փողոցի, թ.14 հասցեում գտնվող առանձնատան նվիրատվությունը իր թոռ Ն.Արզումանյանին կատարել է իր կամքով: Նման հանգամանքներում Գերագույն դատարանը գտնում է, որ նշված գործարքը կատարելիս Թ.Աթայանը էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ չի գտնվել:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածը վերաբերում է ապագայում նվիրատուին գույք կամ իրավունք փոխանցելու կամ նվիրատուին գույքային պարտականությունից ազատելու խոստում պարունակող պայմանագիրը կատարելուց հրաժարվելու նվիրատուի իրավունքին: Մինչդեռ, սույն վեճը վերաբերում է նոտարական կարգով վավերացված 2009թ. մարտի 20-ի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելուն:

Նշված հիմնավորմամբ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 600-րդ հոդվածի դրույթները քննվող քաղաքացիական գործով կիրառելի չեն, իսկ պայմանագրի կատարումը չի առաջացնի նվիրատուի կենսամակարդակի էական իջեցում: Ուստի, Գերագույն դատարանը հիմնավոր չի համարում նաև բողոք բերած անձի պատճառաբանությունն այդ մասով:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը ապացույցների բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հանգել է ճիշտ հետևության և հայցը մերժել, ուստի Գերագույն դատարանը հիմքեր չի գտնում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու կամ փոփոխելու համար:

Ելնելով վերը շարադրվածներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-255-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

1. Հայցվոր Թամարա Աթայանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011 թվականի փետրվարի 14-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Զ. ՕՀԱՆՅԱՆ

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ